

# Թուրքիոյ ներքին գաւառներու Հայոց պարտադիր արտագաղթը

(1929 - 1930 թթ.)

ԶԱԻՒՆ ՄՍԸՐԼԵԱՆ

Հակառակ 1918 թ.ի աշնան Օսմանեան Թուրքիոյ կրած զինուորական պարտութեան, Թուրքիա կրցաւ օգտուել իր զինաթափ չըլլալու հանդամանքէն, արեւմտեան դաշնակիցներու ներքին հակամարտութիւններէն եւ Սովետական Ռուսիոյ հետ իր կեղծ - յեղափոխական կապերէն: Ճիշդ է թէ Օսմանեան կայսրութիւնը, որ արդէն ԺԹ. դարուն անդամահատուիլ սկսած էր, քայքայուեցաւ ու Արարական արեւելքի երկիրները իր հակակշիռէն դուրս ելան, սահայն թրքական պետութիւնը կրցաւ գոյատեւել: Մուսթաֆա Գեմալ Աթաթիւրքի Միլլի շարժումը յաջողեցաւ ոչ միայն կեդրոնական եւ արեւմտեան Փոքր Ասիոյ Թուրք խիտ ազգաբնակչութիւն ունեցող վայրերուն վրայ իր գերիշխանութիւնը հաստատել, այլ զինուորական ուժով եւ միջազգային մեծ տէրութեանց ալ հակամարտութիւններէն օգտուելով, Թուրքիոյ տիրապետութիւնը վերահաստատել Արեւմտեան Հայաստանի, Կարսի մարզի, Մուրմալուի եւ Քիւրտիստանի վրայ: Օսմանեան Կայսրութիւնը փոխարինուած էր թրքական նորատիպ կայսրութեամբ մը, որ թէեւ փոքրածաւալ էր եւ իբր կայսրութիւն չէր ճանչցուեր, սակայն եւ այնպէս կը մնար իբր այդպիսին, քանի որ Թուրքեր կը տիրապետէին Քիւրտիստանի, Լազիստանի եւ իր բնիկ ժողովուրդէն բռնի կերպով դատարկուած Արեւմտեան Հայաստանէն մինչեւ Մուրմալուի դաւառին վրայ: Ճիշդ է թէ Մուսթաֆա Գեմալ յաջողեցաւ իր հակա-սուլթանական, հակա-կղեր, հակա-յետադիմական պայքարին

մէջ եւ մեծ ջանքեր թափեց թուրքիոյ արդիականացման ի խնդիր, կրցաւ կայսերապաշտական պետութիւններու մենաշնորհները ջնջել ու անոնց ազդեցութիւնները որոշ չափով չէզոքացնել, այսուհանդերձ իր պայքարը զուտ ազգային-ազատագրական ու անկախութեան պայքար մը չէր: Այդպիսին չենք կրնար նկատել Առաջին Համաշխարհային պատերազմէն առաջ հայկական մեծամասնութեամբ բնակուած արեւելեան կարգ մը վիլայէթներու զաւթումը, Կարսի բռնազրաւումը եւ մանաւանդ Քեմալական ազգային ուխտով դժուած թուրքիոյ սահմաններուն մէջ չմտնող եւ գրեթէ թրքական տիրապետութեան չենթարկուած Սուրմալուի հայկական գաւառի կցումը: Նոյնը կրնանք ըսել գրեթէ զուտ քրտական ազգաբնակչութիւն ունեցող քրտական շրջաններու մէջ թրքական տիրապետութիւնը ամրապնդելու քեմալական քաղաքականութեան մասին: Քեմալական թուրքիոյ քաղաքականութիւնը՝ այն ինչ որ կը վերաբերի Հայկական եւ Քրտական հարցերուն, շարունակութիւնն էր Իթթիհատականներու ազգայնական մոլեռանդ քաղաքականութեան, որ կը միտէր բնաջնջելով եւ հողամասեր բռնագրաւելով տիրապետելու: Միակ տարբերութիւնը՝ քեմալականներու երկդիմի, վարպետ քաղաքականութիւնն էր ընդմէջ Սովետական Ռուսիոյ եւ արեւմուտեան պետութեանց: Մեթոտը կը մնար նոյնը՝ բնաջնջում: Կարելի է յիշել Ալեքսանդրապոլի գաւառին մէջ կատարուած ջարդերը (1920-1921 թթ.), Կիլիկիոյ ջարդերը, Իզմիրի Աղէտը եւ Քիւրտիստանի մէջ կայացած ջարդերը (1920-1938 թթ.), եւայլն:

Մեծ Եղեռնէն ետք, Արեւմտեան Հայաստանը եւ Փոքր Ասիոյ երբեմնի Հայաշատ վայրերը գրեթէ դատարկուած էին իրենց Հայ ազգաբնակչութենէն, այսուհանդերձ Հայ բեկորներ կ'ապրէին հոս ու հոն, ցիրուցան վիճակի մէջ: Այս մնացորդացէն ոմանք, փոքրաթիւ համախմբումներով կ'ապրէին թրքական մնայուն սպառնալիքներուն ենթակայ:

Քաղաքական դէպքերու զարգացման եւ արեւմտեան պետութիւններու բարոյական սնանկութեան իբրեւ արդիւնք, Քեմալական թուրքիան կը յաջողէր Լոզանի մէջ իրեն համար նպաստաւոր ծանօթ դաշինքը ստորագրել: Լոզանի դաշնագրին իբր հետեւանք, յոյն եւ թուրք ազգաբնակչութեանց փոխանակումներէն ետք՝ իւրաքանչիւրը դէպի իր երկիրը, վատ կացութիւնը տակաւ աւելի կը վատթարանար, մանաւանդ Պոլսէն դուրս, թուրքիոյ գաւառներու մէջ բնակող հայկական փոքրաթիւ համայնքներուն համար:

Քեմալական թուրքիան կը ջանար մէկ կողմէն հայկական այսպէս կոչուած «լքեալ գոյքերը» պետական օրէնսդրութեամբ եւ հրա-

մանազրերով իւրացնել, միւս կողմէ՝ ջանք կը թափէր թուրքեր տեղաւորել Հայերէ դատարկուած, ու այդ շրջանին՝ գրեթէ քրտական ազգարնակչութիւն ունեցող, Արեւելեան Նահանգներուն մէջ:

Գեմալական Թուրքիան կ'որոշէր թէ Լոզանի դաշնագրին գործադրութեան դրուելու թուականէն (6 Օգոստոսի, 1924) ետք, «լքեալ գոյք» պիտի չզբաւուի, այսուհանդերձ (յաջորդական օրէնքներով, որոնք լոյս կը տեսնէին նախարարաց խորհուրդէն, նախարարութենէ մը կամ Աղզային Մեծ Ժողովէն), ամէն կերպ ան կը ջանար իւրացնել Հայկական ստացուածքները: 13 Յունիսի 1926 թ.ին, 17 Յուլիսի, 1927 թ.ին, 24 Հոկտեմբերի, 1927 թ.ին, 28 Մայիսի, 1928 թ.ին, 2 Յունիսի, 1929 թ.ին, 28 Մարտի, 1931 թ.ին, եւ 8 Օգոստոսի, 1932 թ.ին Հայկական եւ այլ «լքեալ գոյք»երու հարցը կը շոշափուի (1):

Յատկանշական է 17 Յուլիսի 1927 թ.ի բարեփոխեալ օրէնքին առիթով Թուրքիոյ տնտեսական նախարարութեան պատկան մարմիններուն տուած բացատրութիւնը, թէ՛ «15 Ապրիլի 1923 թ.ի օրէնքին համաձայն, պետութեան կը փոխանցուին բոլոր անշարժ գոյքերը այն ոչ-իսլամներուն, որոնք Լոզանի դաշնագրին վաւերացումէն առաջ որեւէ ձեւով Պոլիս կամ օտար երկիր անցած են, փախուտաւ, մեկնումի եւ կամ այլ անյայտացման ձեւով...» (2): Արդ, արեւմտահայութեան մեծ տոկոսը ջարդուած էր, միւս մասը տեղահան եղած, մնացորդացին մեծագոյն մասը Պոլիս կը մնար եւ քիչեր տակաւին կ'ապրէին Թուրքիոյ ներքին դաւառներուն մէջ: Իսկ այդ սակաւաթիւ հայութեան կեանքը անտանելի կը դառնար մանաւանդ Լոզանի դաշնագրին յաջորդող տարիներուն: Իսկ լքեալ գոյքերու իւրացման տեսակէտէն, Հայ մնացորդացին ներկայութիւնը կրնար խանգարիչ հանգամանք ստանալ պետութեան համար:

Հանրապետական Թուրքիոյ իշխանութիւնները ամէն կերպ կը ջանային առաւել նօսրացնել զաւառի Հայ մնացորդացը, փութկոտութեամբ լրումին յանդեցնել «լքեալ գոյքերու» հարցը եւ թուրքեր տեղաւորել բունի կերպով Հայերէ դատարկուած նահանգներուն մէջ: Միաժամանակ, անոնք կը սկսէին քիւրտերու բնաջնջումի իրենց ծրագրի գործադրութեան: Յետ պատերազմեան այս շրջանին, Թուրքիա տնտեսական ծանր դրութեան մը մէջ էր ու Հայ մնացորդացը ականատեսն էր այդ վատ կացութեան:

1) Լեւոն Վարդան, Հայկական Տասնհինգը եւ Հայերու Լքեալ Գոյքերը (Բնակավան ակնարկ ըստ քրքակամ վաւերագիրներու), Պէյրութ, 1970, էջ 288-296:

2) Նոյնը, էջ 289-290:

Թուրքիա հետամուտ էր իր բռնադրաւած հողերուն վրայ իր հեղինակութիւնը ամրապնդելու ծրարքին: Ուստի, դեռ 1927 թ.ին որոշում առած էր 100,000 թուրքեր տեղաւորել Արեւելեան Նահանգներուն մէջ, ու այդ նպատակով մէկ միլիոն թրքական ոսկիի պիւտճէ մը քուէարկուած էր: Թուրք կառավարութիւնը նպատակադրած էր «50,000 թուրքեր բերել Կովկասէն, 15,000 Սուրիայէն, 5000 Կիպրոսէն եւ 30,000 ալ զանազան վայրերէ» (3): 1938 թ.ին Կովկասի շրջանէն բազմաթիւ թուրքեր կը գաղթէին Թուրքիա:

Քիւրտերուն մէկ մասը հայոց դէմ կազմակերպուած ջարդերուն մէջ իբր գործիք օգտագործելէ ետք, թուրք պետութիւնը հետամուտ կ'ըլլար քրտական հարցին իր ըմբռնած ձեւով լուծման: Երբ Լոզանի դաշնագրով թուրքեր յաղթանակ մը կը տանէին, քիւրտ ազգային-ազատագրական շարժումը կը սթափէր ու կը դիմէր զինեալ ապստամբութեան: 1924 թ.ի Սեպտեմբերի վերջերուն, Պէյթի-Շէպապ Հեքիարի դէպքով կը սկսի քրտական շարժումը, որ 1925 թ.ի դարնան ընդհանուր ապստամբութեան կը վերածուի, որ կը տեւէ մինչեւ 1925 թ.ի աշունը: Յաջորդող ձմրան, թուրք կառավարութիւնը կը ձեռնարկէր քիւրտերու մէկ մասին տեղահանութեան: Պայաղիտէն, Ալաշկերտէն, Մուշէն, Էրզրումէն, Տիարպեքիէն, Տերսիմէն եւ այլ շրջաններէ քիւրտեր պարտադրաբար կը տեղափոխուէին դէպի Արեւմտեան նահանգները (Սեբաստիա, Անգարա, եւ Գոնիա), ենթարկուելով ահաւոր տառապանքներու եւ սպաննութիւններու (4): Արարատի, Հեքիարիի, Սասունի եւ Տերսիմի շրջանի քիւրտերը ապստամբութեան մէջ էին: Վանի, Պուլա-նըզի եւ Մալազկերտի քիւրտերը թէեւ պաշտօնապէս չէզոք, սակայն եւ այնպէս ինքնապաշտպանութեան ուղղութեամբ կը մտածէին: Իսկ ամենէն ընկճուած շրջաններէն էին Կենճի, Ճապաղջուրի, Բալուի, Լճէի եւ Տիարպեքիի քանի մը շրջանները: Իսկ սպասողական դիրքի մէջ էին Սղերդի, Մարտինի, Ուրֆայի, եւ Սեւերեկի քիւրտերը (5):

Այս ընդհանուր կացութեան մէջ հայ մնացորդացը թուրքերու կողմէ անօրինակ ճնշումներու կ'ենթարկուէր: Մանաւանդ թուրք պետութիւնը կը վախնար հայ եւ քիւրտ գործակցութենէ մը: Արդարեւ՝ քիւրտ եւ հայ դաշնակցական գործիչներ 1926 և 1927

3) Կարօ Սասունի, Քիւրտ Ազգային Շարժումները եւ Հայ-Քրտական Յարաբերութիւնները (ԺԵ. գարեմ միջիւ մեր օրերը), Պէյրութ, 1980, էջ 285:

4) Նայմը, էջ 258:

5) Նայմը, էջ 257-258:

ԹԹ-ուն զիրար հասկնալու ճիգեր թափելէ ետք, 1927 թ-ի ամրան Քիւրտ Ազգային Ընդհանուր Համագումարին միջոցով ստեղծուած «Հոյիրուն» ազգային քաղաքական կուսակցութեան քաղաքական ուղեգիծին Դ. կէտով կ'արձանագրէին. «Համագումարը կը յայտարարէ հրապարակաւ, որ Հայաստանն ու Քիւրտիստանը, ուր դարերով բնակած են այս երկու ժողովուրդները, կը մերժեն ենթարկուիլ որեւէ օտար իշխանութեան, ձգտելով իրենց անկախութեան: Եւ որ այդ երկու երկիրները կը պատկանին միայն հայ եւ քիւրտ ժողովուրդին» (6):

Թուրքիոյ ներքին դաւառներու հայ բեկորները 30-40,000 կը գնահատուէին: 1923 թ-էն սկսեալ անոնցմէ անոնք, որոնք ի վիճակի էին ճանապարհածախս հոգալու, Կ. Պոլիս եւ Սուրիա կը դադարէին: Մնացեալ հայերը իրենց պապենական դարաւոր հողերուն վրայ կը քաշքշէին իրենց թշուառ կեանքը, երբ վրայ կը հասնէր քրտական ապստամբութիւնը: Թուրք պետութիւնը անհրաժեշտ պատրուակը գտնելով, ու հետամուտ Արեւելեան Նահանգները թրքարնակ դարձնելու իր ծրագիրներուն, նոր արտագաղթ կը պարտադրէր հազարաւոր հայերու: Արդարեւ, կարգ մը քրտական աշիրէթներու մէջ մնացած հայեր, քրտացած կամ քրտական տարադներով կը մասնակցէին ապստամբութեան, զոհեր ալ տալով (7): Հ. Յ. Դաշնակցութեան եւ «Հոյիրուն»ի բարեկամական կապերն ալ լրացուցիչ մասերը կը դառնան այդ պատրուակին: Քրտական ապստամբութեան առաջին շրջանին, թուրքեր շատ կը դրեն հայերու մասնակցութեան մասին, հուսկ անտեսելու համար այդ մէկը (8):

Այսպէս, 1929 թ-ի աշնան, Թուրքիոյ ներքին դաւառներու հայ մնացորդացին մէկ մասին կը պարտադրուէր նոր արտագաղթ մը, շարունակելով 1915-1922 թթ-ու գործը:

Հայ բեկորներուն կը պարտադրուի լքել իրենց տունն ու գործը եւ թրքական անցադրերով Սուրիա մտնել: Այդ անցադրերուն վրայ կը զարնուէր կնիք մը, որ կ'ըսէր. «Թուրքիա վերադարձը արգիւրուած»: Նոր ժամանակներու յատուկ, նոր, բայց խորքով հին միջոցառումները կ'առնուէին հայոց դէմ: Սուրիոյ Փրանսական հոգատար իշխանութիւնները կ'ընդունէին այս նոր գաղթականները: Ըստ Կիպրոսի անգլիացի հոգեւոր հովիւ Հարոլտ Պաքսթընի, Փրան-

6) Նայմը, էջ 262-264:

7) Նայմը, էջ 259:

8) Նայմը, էջ 285:

սական եւ թրքական իշխանութիւնները այս հարցով՝ 1929 թ.ի Դեկտեմբերին իրարու հետ բանակցած են (9) :

Հայ բեկորները կու գային Տիարպեքերէն, Սարբերդէն, Բալուէն, Մարտինէն, Վանէն, Պշէրիկէն եւայլն : Ըստ Լոնտոնի քաղաքապետի Հայկական Փոնտին (Lord Mayor's Fund) 9 Յունուարի 1930 թ.ի կոչին՝ ծայրայեղ խեղճութեան եւ իրենց անշարժ եւ շարժուն ստացուածքներէն մերկացուած հայ բեկորները 1929 թ.ի աշնան պարտադրուած էին լքել իրենց բնակավայրերը եւ հեռանալ այնպիսի անցադրերով, որ իրենց թուրքիա վերստին մուտքը անհնար կը դարձնէր : Սարբերդէն եւ Բալուէն եկող գաղթականները երկաթուղիով կը հասնէին Սուրիոյ սահմանադրուիւր, իսկ Տիարպեքերի շրջանի հայերը հարկադրուած էին քալելով հասնել սահմանադրուիւր : Անոնք ընդհանրապէս անօթի եւ կիսամերկ վիճակով կը հասնէին սահմանադրուիւր, ու պատսպարան չգտնելով ճամբաները կը պառկէին աշնան ցուրտ եղանակին (10) :

Հալէպի Հայկական Կոմիտէին (որ ենթակայ էր Փարիզի Հայ Գաղթականաց Կեդրոնական Կոմիտէին) ղրկած հետեւեալ աղերսագիրը խօսուէն է :

«Հալէպ 28 Հոկտեմբեր (1929)

«Պշերիկի հայերը, որոնք դարեր շարունակ իրենց քրիստոնեայ հաւատքը եւ ազգութիւնը պահպանած են թուրք եւ քիւրտ թշնամի տարրերուն միջեւ, այսօր դուրս քշուած են սուրիական սահմանին ընդմէջէն : Տիարպեքերի նահանգին մէջ, ինչպէս նաեւ ամբողջ Անատոլիայի նահանգներուն մէջ, վերապրող հայերը պարտադրուած են աքսորի, ամբողջովին կողոպտուելէ եւ իրենց կալուածներէն ու ստացուածքներէն մեկուսացուելէ ետք, գրեթէ կիսամերկ ու անօթի բռնի հեռանալու :

«Հիւսիսային Սուրիոյ սահմանային շրջանները, այսինքն Քամիշլի, Ռաս Ըլ Այն, Հասիչէ եւ Ամուտէ, ամէն օր վկաներն են այս պարտադիր գաղթին :

«Տակաւին ենթակայ սիրտ կոտորող հարուածին որով բաժնուած ենք մեր լեռներէն ու դաշտերէն, մեր եկեղեցիներէն, մեր աշխարհիկ յիշատակներէն եւ գերեզմանոցներէն, այսօր դէմ առ

9) Translations of Crown — copyright records in the Public Record Office, London, appears by permission of the Controller of H. M. Stationery Office. F. O. 371/13827.

10) F. O. 371/14567.

յանդիման ենք մեր ամենօրեայ հացի եւ յառաջիկայ ձմեռուայ համար երդիքի ամենակարեւոր կարիքին :

«Ասոր համար ձեր եղբայրական ակնկարծիւնը կ'ուզենք : Մենք մուրացկաններ չենք եւ դուքի վրայ ապրելու ալ վարժ չենք : Միակ բանը զոր կ'ուզենք այն է, որ դուք մեզի փոխ տաք միջոցներ, որոնցմով կարողանանք ապահովել հող, բնակարան եւ աշխատանք : Մենք վստահ ենք որ շուտով ինքնաբաւ պիտի դառնանք, վճարենք մեր պարտքերը եւ միշտ երախտագիտութեամբ յիշենք ձեր օգնութիւնը :

«Մենք ձեր դրան կը կենանք եւ յոյսով կը սպասենք ձեր պատասխանին :

Գրիգոր Սարգիսեան  
Պապուշ Օհանեան» (11)

Այսպէս, Անգարայի իշխանութիւնները կը ձեռնարկէին հայկական նոր տեղահանութեան մը : 7 Նոյեմբերին, Բալուի շրջանէն Հալէպ հասած 25 հայ ընտանիքներ կը պատմեն թէ ինչպէս, երբ իրենց դաշտերուն մէջ կ'աշխատէին, ոստիկաններ յանկարծ իրենց մօտենալով կը հրահանդեն անմիջապէս ամէն բան ձգել եւ Բալու մէկտեղուիլ : Իրենց կահկարասիները որեւէ դնով հազիւ ծախելէ ետք, Բալու կը մեկնին անոնք, ուր կը հարկադրուին ալյատեսակ սուրքեր վճարելու : Ապա՝ իրենց կը հաղորդուի անմիջապէս դէպի Սուրիա ճամբայ ելլել : Այս խումբը կը տեղեկացնէ թէ հարիւրաւոր հայեր Պարբերդի մէջ կը սպասէին իրենց անցադրային գործողութեանց աւարտին, որպէսզի Սուրիա մեկնին (12) :

Տակաւ յայտնի կ'ըլլար թէ տնտեսական նեղ պայմաններու բերումով հայերու կամաւոր արտագաղթը չէր որ տեղի կ'ունենար, այլ՝ թուրք կառավարութեան կողմէ բռնի արտագաղթ մը կը պարտադրուէր Մեծ Եղեռնէն վերապրած եւ թուրքիոյ ներքին դաւառները մնացած հայութեան :

Թուրք պետութեան եւ նաեւ թուրք ժողովուրդին հակա-հայ բացայայտ տրամադրութեան եւ արարքներուն որպէս արդիւնք, մթնոլորտը արդէն անշնչելի դարձած էր հայութեան համար : Բնական է որ մեծ տէրութեանց դիւանագիտական ներկայացուցիչները այս ուղղութեամբ կը հետաքրքրուէին ու պարբերական տեղեկագրութիւններով տեղեկակ կը պահէին իրենց արտաքին գործոց նա-

11) Բ. Օ. 371/13327.

12) Նոյնը :

խորարութիւնները: Այժմ, երբ այդ վաւերաթուղթերը պատմութեան համար բաց են, Հալէպի Անգլիական Հիւպատոս Մոնք-Մէյսոնի 14 Նոյեմբերի 1929 թուակիր գաղտնի թիւ 79 տեղեկագիրը (13), ղրկուած Լոնտոն, Արտաքին Գործոց Նախարարութեան Պր. Ա. Հենտըրսընին, եւ Լոնտոնի մէջ 10 Դեկտեմբերին ստացուած, կարելի կ'ըլլայ իր կարեւորութեան համար ներկայացնել իր ամբողջութեամբ, անփոփոխ պահելով տեղեկագրին ոճը, եւ գործածած յատուկ անունները:

«Սուրիոյ Հայկական դաղթավայրին մասին 16 Ապրիլի, 1929 թ.ի թիւ 32 տեղեկագրիս ակնարկելով, պատիւն ունիմ ձեզի տեղեկացնելու թէ անցնող վերջին վեց ամիսներուն Խարբութի, Տիարպեքիւրի եւ Մարտինի շրջանէն դաղթականներ շարունակաբար կու գան եւ իրենց թիւերը զգալիօրէն աւելցած են անցնող վերջին շաբաթներուն: Թուրքիոյ կացութեան մասին ինձի ցոյց տրուած է տեղեկագիր մը, որ գրուած է գերման միսիոնարութեան համար աշխատող Ֆրանսացի կաթողիկէ եկեղեցականի մը կողմէ: Տեղեկագիրը առաջուած է Գերմանիա եւ Տանիմարքա: Տեղեկութեան աղբիւրը Խարբութէն նոր հասած դաղթական մըն է, որ հոն ուսանած է Գափիւսեաններու միսիոնարական դպրոցին մէջ եւ լաւ զարգացած մէկն է:

«2 - Թրքական կառավարութեան հաստատուած քաղաքականութիւնը կը թուի ըլլալ հեռաւոր Անատոլուի նահանգներու բոլոր քրիստոնեայ տարրերէն ձերբազատուելը, ամէն միջոցով՝ բացի Չարդէն, որմէ իրապէս կը թուի շատ քիչ եղած ըլլալ: Մինչ թրքական իշխանութիւնները, անշուշտ, առաջինը պիտի ըլլան ցաւելու նման դժբախտ պատահարներու, ինչպէս վերջին անպաշտօն սպաննութիւնը Տիարպեքիւրի Գրիգորեան եպիսկոպոսին (14)՝ խումբ մը գինով զինուորներու կողմէ, հաւանաբար կը զգացուի թէ կազմակերպուած Չարդի նմանող որեւէ բան, կրնայ օտար պետութեանց կողմէ բողոքներ բարձրացնել: Ինձի այնպէս կը թուի թէ, նաեւ, պատճառներէն մէկը, որ բոլոր քրիստոնեաները (ոչ միայն հայերը) կը տեղահանուին, կրնայ թուրքերուն բնական չկամու-

13) Բ. Օ. 371/13827.

14) Կ'ակնարկէ Տիարպեքիւրի Հայ Առաքելական Բազմային, քիւրիստոնեայ քեմալ գայմ եպիսկոպոսն ձկատելով: Տեղեկագրի վերջաւորութեամբ արդէն կը թշնամային ամուսնացած ըլլալու պարագան: Օտարներ Հայց. Առաքելական եկեղեցին Գրիգորեանն ձկատած են իր հիմնադրին Ս. Գրիգոր Լուսաւորիչի անունով:

թիւնը [ըլլալ] լաւ աչքով նայելու, արեւելեան նահանգներուն ցաւալի կացութեան քննադատարար դիտողներուն :

«3 - Վերադառնալու համար վերեւ յիշուած տեղեկազրին : Հալէպ այն ապաստանարանն է, ուր հայ դաղթականներու ամէնօրեայ կարաւաններ կու դան : Ամբողջ ընտանիքներ հիւանդ են, եւ զրեթէ բոլորն ալ ամբողջովին կարիքի մէջ են : «Թուրքիոյ մէջ, այսօր», կ'ըսէ Պարբութէն եկած հայը, «ապրելու ոչ մէկ միջոց ունինք, մենք հալածուած, կասկածի ենթարկուած, կողոպտուած, դէշ վերաբերմունք ստացած, բանտ նետուած, դատուած եւ եթէ բախտաւոր ենք, տեղահան եղած ենք» : Հայկական գերեզմաններ թաւանուած են քարերու համար, որոնք պէտք են զօրանոցներ կառուցանելու : Վերջերս Քափիւսեններու վանքին վանականները կ'արթննան տեսնելու համար որ կաթողիկէ գերեզմանոցին գերեզմանաքարերը չկան : Վանականները քարերը կը գտնեն զօրանոցին բազիլին մէջ, եւ խոստումներէ ետք որ քարերը պիտի վերադարձուին, դողովթիւնը ուրացուեցաւ եւ վանականները մեղադրուեցան հանրապետական զօրքերը անարդելնուն համար : Վանքին պարտէզը թրքական զինուորներու կողմէ բրիտանական ձեռնառումբեր ցանուած են ինչպէս եւ պղտիկ տոպրակ մը ռումբեր, որոնց հունտը հետագային որոշ արարողութեամբ «գտնուեցաւ» կարգ մը բարձրաստիճան պաշտօնատարներու եւ բանակի սպաներու կողմէ : Հակառակ այս իրաւունքներու ոտնակոխումին դէմ վանքի մեծաւորին գրաւոր բողոքին, զինուորական ատենի մը կողմէ վանականները մեծ դաւաճանութեան համար դատուեցան, բայց [թուրքերը] հարկադրուեցան դանոնք անպարտ արձակել փաստի չզոյութեան պատճառով :

«4 - Քանի մը օրեր ետք ռումբ մը նետուեցաւ Հայ Բողոքական եկեղեցիին մէջ, որ ձգուեցաւ որ այրուի : Որոշ թիւով հայեր, որոնց մէջ եկեղեցւոյ հովիւը, որպէս հրձիգ ձերբակալուեցան, կարճ ժամանակ ետք ազատ արձակուեցան եւ արտաքսուեցան երկրէն : Եկեղեցին ապա փոխակերպուեցաւ զինամթերանոցի : Ապա Ասորի եւ Գրիգորեան եկեղեցիներու կարգը եկաւ : Այս վերջինները որպէս անվստահելի դատապարտուեցան, մինչ ռումբեր նետուեցան ասորի եկեղեցիին մէջ (որոնք չպայթեցան) : Վանականներուն (ասորի՞ թէ քափիւսէն վանքէն, չեմ գիտեր) հասկցուցին թէ պէտք է Պարբութը ձգէին, այն մեթոտով որ կրնային իրենց ստացուածքները՝ բացի շէնքերէն, ծախել : Երբ անոնք մերժեցին ենթարկուիլ, անոնց ցոյց տրուեցաւ իրենց անունները աքսորեալներու ցանկի մը վրայ, եւ յանձնուեցան իրենց անցազիրերը :

«5 - 1 Յունուարի, 1929 թ.ի կառավարական հրամանագրով, հայեր չեն կրնար ծախել կամ կտակել իրենց ստացուածքը, որ իրենց մահուընէ ետք կ'երթայ պետութեան: Հայ զիւղացիները կեդրոնացած են նահանգային մայրաքաղաքներուն մէջ: Իրենց տուները, դաշտերը եւ հունձքերը կ'երթան թուրք դաղթականներուն: Այսօր 250-էն 300 հայ ընտանիքներ կան Խարբուլի մէջ, ուր պատերազմէն առջ 180,000 [հոգի] կ'ապրէին:

«6 - Խարբուլի քրիստոնեաները այսօր առանց ղեկավարի են եւ առանց եկեղեցիի կամ հովիւի, եւ կ'ապրին մնայուն վախի մէջ: Անոնք որ քիչ մը դրամ ունին դէպի սուրիական սահմանը կը փախչին. աղքատները քալելով կը հեռանան: Գարգ մը ընտանիքներ Սուրիա ապաստանարան դտած են, պզտիկ երեխաներով շաբաթներ, նոյնիսկ ամիսներ ոտքով ճամբորդելէ ետք, մալարիայի ենթակայ:

«7 - Տիարպեքիւրի մէջ, հայոց եպիսկոպոսին՝ եօթը գինով զինուորներու կողմէ սպանուելէն ետք, եպիսկոպոսին կինն եւ ծառան բանտարկուեցան եւ ամէնօրեայ չարչարանքներու ենթարկուեցան (որ թերեւս մինչեւ հիմա կը շարունակուի) զիրենք խոստովանեցնելու համար թէ ոճիրը իրենց սեփական ժողովուրդէն մէկուն գործն էր: Շատ մը հայեր ձերբակալուեցան, եւ դատավարութեանէ ետք թուրքիոյ այլ վայրերը աքորուեցան:

«8 - Տիարպեքիւրի Յակոբիկեան եպիսկոպոսին կեանքին դէմ երեք մահափորձեր կատարուած են, իւրաքանչիւր առիթին ան հրաշքով ազատած է: Թուրքեր ուսմբ մը պահած են Քաղղէական եկեղեցւոյ մէջ, բայց քահանան արարքին դործադրուելը տեսած է եւ հրէշային մեքենան վերցուցած է, եւ վտակի մը մէջ նետած: Երբ սլայթում չէ եղած, քահանան ոստիկանութեան առջեւ քաջջուելով տարուած է: Երբ ան սպառնացած է Անդարայի կառավարութեան դանդատիլ, դէպի սահման առաջնորդուած է:

«9 - Տեղեկագիրը կ'աւարտի քանի մը նկատառումներով, որ, եթէ ներկայ վարչաձեւին տակ բանակի սպաները եւ քաղաքային պաշտօնեաները աւելի լաւ կը վճարուին, ժողովուրդը ճնշումի տակ կը տառապի: Թուրք պարզ զիւղացին կը տեսնէ կառավարութեան, ցեղի եւ կրօնի անկումը: Հաղարաւորներ կը հառաչեն տուրքերու անհանդուրժելի լուծին տակ: Տիեզերական յոյսը դէպի լաւ օրերը քայքայուած է, եւ ժողովուրդը կը յուսայ որեւէ փոփոխութեան, քանի ոչ մէկ բան աւելի դէշ կրնայ ըլլալ քան ներկայ կացութիւնը:

«10 - Այս պաշտօնական տեղեկագրէն օրինակներ կը ղրկեմ Նորին Վեհափառութեան Դեսպանին՝ Կոստանդնուպոլիս, և Նորին

Վեհափառութեան հիւպատոսական գրասենեակներուն՝ Պէյրութ եւ Դամասկոս :

Ա. Մոնթ Մէյսըն»

Փարիզի Հայ Գաղթականաց Կեդրոնական Կոմիտէն (որուն կեդրոնատեղին այսօրուայ Հ. Բ. Ը. Մ. Ի Նուպարեան Մատենադարանի վայրն էր) մօտէն կը հետաքրքրուէր այս պարտադիր արտազաղթով : Այս մարմնէն՝ գրապէտ Լեւոն Բաշալեան, որ նոյն մարմինը կը ներկայացնէր Ազգերու Լիկայի Գաղթականաց Բարձր Կոմիտարութեան Սորհրդատու Կոմիտէին մէջ, Անգլիոյ Հայասէր Կազմակերպութեան մը վարիչին՝ Պր. Կոլտընի, իր 5 Դեկտեմբերի, 1929 թուակիր նամակին մէջ կը յայտնէր թէ՛ Համաձայն Պր. Լը Նեյի Սուրիոյ Քրանսացի Բարձր Կոմիտար Պր. Փոնսոյէն ստացած տեղեկութեան, շուրջ 30,000 հայեր պարտադիր արտազաղթի միջոցառման ենթակայ պիտի ըլլային : Փոնսոյ արդէն Քէյ Տ'Օրսէի տեղեկացուցած էր, թէ «Թուրքիա վերադարձը արգելուած» կնիքով անցապէս յստակօրէն կը պարզէին Թուրքիոյ Հայերու արտաքսումին ծրարները : Բաշալեան ապա կը յայտնէր թէ ամէն օր բազմատասնեակ հայ գաղթականներու խումբեր կը հասնէին Հալէպ : Այս խումբերէն ոմանք թրքական պարտադրանքի տակ թողուցած են իրենց բնակավայրերը, մինչ ուրիշներ՝ չէին սպասած այդ հրամանին, եւ կամօվին հեռացած էին, չկարենալով տոկալ ստեղծուած անկարելի կացութեան : Տեղեկագիրը ապա կը յայտնէր թէ ցարդ 200 հայ ընտանիքներ, խեղճ վիճակի մէջ, Քամիչլի հաւաքուած են եւ օգնութեան կարօտ են (15) :

Անգլիական շրջանակներու հետ մօտէն կապ ունեցող Հալէպահայ Տոքթ. Ա. Ալթունեան, Կիպրոսի անգլիացի հոգեւոր հովիւ Հարըլա Պաքսթընի 29 Նոյեմբերի, 1929 թուակիր իր նամակին մէջ կը հաղորդէր թէ, շուրջ 400 հայեր, գլխաւորաբար Վանէն եւ Խարբերդէն, Հալէպ էին եւ քաղաքէն դուրս, լքեալ, հին ու աղտոտ շէնքի մը մէջ կ'ապրէին : Ապա կ'աւելցնէր թէ վերջին պահուն 200 հայեր եւս հասած էին քաղաք եւ թէ հազար հոգի եւս կը սպասուէր : Տոքթ. Ալթունեան կը յայտնէր թէ այս հայերը քիւրտերու հետ ապրած էին եւ երկրագործութեամբ կը զբաղէին, թէ մինչեւ քուրիական սահման իրենց հասնիլը թուրքերէ կողոպտուած էին և զուրկ էին որեւէ հասոյթէ : Մինչեւ նամակին գրուած օրը, միայն Հ. Բ. Ը. Միութիւնը 50 անգլիական ոսկիի նպաստ մը յատկացու-

ցած էր: Տոբթ. Ալթունեան կը գրէր թէ իրեն համար կարեւորագոյն քայլը պիտի ըլլար այս գաղթականներու հաստատումը նոր հողերու վրայ (16):

Հարըլտ Պաքսթըն, իր կարգին, 2 Դեկտեմբերի, 1929 թուակիր իր տեղեկագրին մէջ, ի միջի այլոց կը յայտնէր որ Հալէպի մէջ իրեն տեղեկացուցած էին թէ 500 հայեր եկած էին Թուրքիայէն եւ թէ 2000 հոգի եւս կը սպասուէր: Անգլիացի կղերականը կը յայտնէր նաեւ որ հայկական տեղական Կոմիտէ մը կազմուած է Վեր. Շիրաճեանի ղեկավարութեամբ: Ապուր հայթայթող խոհանոց մը հաստատուած էր անմիջապէս եւ հագուստեղէն տրամադրուած գաղթականներուն: Պաքսթըն, իր կարգին, 25 անգլիական ոսկիի նպաստ մը կ'ընէր եւ կը յայտնէր թէ Փրանսական իշխանութիւնները կը ջանային նորեկ գաղթականները քաղաքներէն հեռու պահել (17):

Սուրիահայ, ապա սփիւռքահայ մամուլը եւ հուակ՝ միջազգային մամուլը, թէեւ այս վերջինը շատ հարեւանցիօրէն, կ'անդրադառնային այս նոր արտագաղթին: Անդին՝ արտաքին գործոց նախարարութեանց սպասարկութիւնները հայասէր ճանչցուած կազմակերպութեանց եւ հայկական մարմիններու դիմումները կ'ընդունէին առանց հրապարակային որեւէ հակադրեցութեան, չնեղացնելու համար իրենց Թուրք բարեկամները:

Այսպէս, Լոնտոնի մէջ Անգլիոյ արտաքին գործոց նախարարութեան կը դիմէր Պր. Կրէյսի, որ նախապէս «Ճրենտս աւ Արմինիա»-ի ընկերակցութեան մէջ էր ու այդ ատեն կ'աշխատէր «Մէյփ տը Զիլտրըն» Ֆոնտին մէջ, եւ ատեն մը, զինադադարի շրջանին, Անդրկովկասի մէջ գործած էր: Պր. Կրէյսի, 9 Դեկտեմբերի, 1929 թ.-ին, Ֆորէյն Օֆիսի մէջ կը հանդիպէր Լորտ Մոնթիկըլի եւ Պր. Ռենտըլի, եւ իրենց կը յայտնէր Լեոն Բաշալեանի 5 Դեկտեմբերի, 1929 թուակիր նամակին պատճէնը եւ ապա՝ կը խօսէր Թուրքիոյ հայոց պարտադրուած նոր արտագաղթին մասին (18): Պետական վաւերացումը (19) քաղելով կը ներկայացնէր այդ տեսակցութեան ընթացքին փոխանակուած միտքերը:

Պր. Կրէյսի Ֆորէյն Օֆիսին կը տեղեկացնէր թէ ըստ հաստատի աղբիւրներու, Թրքական իշխանութիւնները Թուրքիոյ հայ

16) Նայճը:

17) Նայճը:

18) Նայճը:

19) Նայճը:

մնացորդացին դէմ հալածանքներու սկսած էին: Պարբերդի շրջանէն 300 հայ ընտանիքներ Հալէպ հասած էին եւ թէ հաւանական կը թուէր թէ 30,000-40,000 հայեր միաժամանակ հիւսիսային Սուրիա հասնէին: Որպէս անդիակական բարեսիրական ընկերութեան ներկայացուցիչը, ինք մտահոգ էր որ եթէ արտագաղթը մինչեւ այդ օր եղած թափով շարունակուէր, նեղ կացութեան պիտի մատնուէին անդիակական բարեսիրական ընկերակցութիւնները: Մինչ Ֆրանսական հոգատար իշխանութիւնները առատաձեռնօրէն կ'օգնէին նորահաս զաղթականներուն՝ հող ու դրամ տրամադրելով, այսուհանդերձ, անդիակական օժանդակութեան կարիքը մեծ էր կացութիւնը լրիւ դիմակալելու համար:

Այս կացութեան դիմաց, անդիակական բարեսիրական հաստատութիւնները կը ծրագրէին կոչ մը հրատարակել «որ կրնայ, որոշ չափով հակա-թուրք զբոսութիւն ստեղծել»: Իրենք կ'ըմբռնէին թէ նման զբոսութիւն մը Թուրքիոյ հայերուն օգտակար չէր կրնար ըլլալ եւ կ'ողէին առաջը առնել, բայց այդ կարելի կ'ըլլար միայն եթէ արտագաղթի թափը կասեցուէր եւ 30,000-40,000 հայերը փոխանակ միանուազ դալու, փոքր խումբերով հասնէին: Ուստի Պր. Կրէյսի կը խնդրէր անդիակական կառավարութեան ավակցութիւնը, «դանդաղեցնելու համար արտաքսման ընթացքը, որպէսզի արտագաղթը մարդկայնական պայմաններու մէջ տեղի ունենար»: Այդ մէկը կարելի կ'ըլլար, եթէ Անգարայի Անդլիոյ ներկայացուցիչը այս հարցով թուրք կառավարութեան մօտենար անպաշտօն կերպով: Ապա՝ յայտնէր նաեւ թէ անդիակական բարեսիրական կազմակերպութիւններ կ'ողէին իրողութիւնները հրատարակել եւ թէ Յորէյն Օֆիսը չէր քաջալերած նման քայլ մը որ «չատ անհաճոյ կըրնար ըլլալ թրքական կառավարութեան»: Այս ընթացքին համար անդիակական կառավարութիւնը մեծապէս կը յուսար որ թրքական կառավարութիւնը հայերու արտաքսման չափը եւ եղանակը բարեփոխէր: Պր. Կրէյսի կը թելադրէր նաեւ որ Լորտ Սեսիլ Լոնտոնի թրքական դեսպանին խօսէր այս մասին:

Արտաքին դործոց նախարարութեան ներկայացուցիչները կը յայտնէին թէ թուրքեր որեւէ արտաքին միջամտութեան դէմ կ'ընդվզին եւ թէ՛ միջամտութիւնը գէշ հետեւանք կ'ունենար խնդրոյ առարկայ փոքրամասնութեան վրայ: Իսկ քանի որ զաղթականները Ֆրանսական հոգատարութեան ենթակայ Սուրիա կու դային, այդ հարցը աւելի Ֆրանսական շահերը, քան՝ անդիակական շահերը կը շահագրգռէր: Պր. Կրէյսի պնդումներով կ'որոշուէր հարցը անլի բարձր իշխանութեանց յղել:

Արտաքին դործոց նախարարութեան նոյն օրուայ ատենադրութիւններէն (20) յայտնի կ'ըլլայ թէ անդիւիացիք չէին ուզեր Պր. Կրէյսիի թելադրած քայլերը առնել: Առաջին ատենադրողը, Պր. Քնայթ, կը խորհի թէ «արտօսենք Պր. Էտմընտցին, որ եթէ առարկութիւն չի տեսներ, ինք թուրքիոյ արտաքին դործոց նախարարին առանձին յիշատակէ հայոց արտադաղթը: Այդ ատեն Պր. Կրէյսիին կրնաք ըսել թէ բան մը ըրինք, մինչ կը կարծեմ թէ Պր. Էտմընտց գրեթէ ապահովաբար որոշէ ոչինչ ըսել այդ մասին»: Ապա՝ Պր. Քնայթ կ'աւելցնէ թէ փոքրամասնութեանց որեւէ հարցի դոյուլթեան խօսքը թուրքերը կատաղութեան կը մղէ, ուստի՝ քանի որ Անդլիա որեւէ շահ (locus standi) չունի խնդրին մէջ, «Հայոց մնացորդացին համար միջամտութիւն մը միայն պիտի վտանգէ ներկայի մեր լաւ յարաբերութիւնը թուրքերու հետ, եւ ինչ որ թերեւս աւելի լուրջ է, ծանրօրէն վտանգէ դոյուլթիւնը այն ժողովուրդին, գորս կ'ուզենք պաշտպանել»:

Ապա կը կասկածի թէ Կ. Պոլսէն դուրս 10,000-էն աւելի հայեր կան, որոնք ընդհանրապէս ամենէն խեղճ շրջաններուն մէջ կ'ապրին: Ու եթէ թուրք կառավարութիւնը ձեռով մը հասկցնէ թէ հայոց անհետացումը եւ կալուածներուն գրաւումը անպատիժ կըրնայ մնալ, այդ շրջանի թուրք ժողովուրդին համար այդ ժողովըրդական որոշում մը կրնայ ըլլալ: Այս վտանգը կրնայ իրականանալ եթէ ընթացք տրուի Պր. Կրէյսիի խնդրանքին:

Պր. Ռենտըլ իր կարգին՝ 10 Դեկտեմբերին, իր համամտութիւնը կը յայտնէ Պր. Քնայթի կարծիքին, աւելցնելով որ եթէ թուրքերու յայտնուի թէ հայ դաղթականներ Սուրիա կը հասնին, անոնք պիտի ըսեն թէ հայեր իրենց ազատ կամքովը կը հեռանան եւ կամ անոնք մեծապէս անհաւատարիմ եղած են թուրք հանրապետութեան: Ապա՝ հաւասարապէս կարելի կը գտնէ որ թուրքերը քայլեր առնեն որ հայեր մինչեւ սուրիական սահման հասնելու չտուկան, եւ թէ՛ քանի արտաքստուղները քրտական շրջաններու մէջ կ'ապրին, «չատ դիւրին պիտի ըլլար նման կարգադրութեան մը դործադրումը» (21):

Լորտ Մոնթիկըլլ եւս համաձայն ըլլալով Քնայթի եւ Ռենտըլի կարծիքին, կ'աւելցնէր թէ հայանպատ միջամտութիւնը պիտի սաստկացնէր չարիքը, որուն առաջըր առնելու մասին կը մտածէին: Լորտ Մոնթիկըլլի ստորագրութեամբ՝ 13 Դեկտեմբերի, 1929 թուա-

20) Նոյնը:

21) Նոյնը:

կիր նամակ մը կը ղրկուէր Պր. Կրէյսի, յայտնելով թէ իր խնդրած միջամտութիւնը փափաքուած ազդեցութիւնը պիտի չունենար, ուստի կարելի չէր միջամտել առաջադրուած ձեւով (22) :

Լոնտոնի «Թայմզ» ազդեցիկ թերթը, իր 11 Դեկտեմբերի, 1929 թիւով, 17 տողերու մէջ կը հրատարակէր՝ Փարիզի իր թըղթակիցէն քաղած տեղեկութիւնները՝ «Հայ դաղթականներ Սուրիոյ մէջ: Անդեկավարելի հոսանք մը» խորագրին տակ: Ըստ լուրին՝ «Որոշ ժամանակէ մը ի վեր մեծ թիւով հայեր թրքական հողամասերէն դուրս կու գան եւ Սուրիոյ մէջ ապաստանարան կը փնտռեն, եւ վերջերս շարժումը աւելցած է: Անոնք Սուրիա կը հասնին ծայրայեղ խեղճ վիճակի մը մէջ, եւ իրենք իրենց կը դնեն Ֆրանսական իշխանութեանց դուրսին ներքեւ, որոնք իրենց կարելին կ'ընեն:

«Յարդ, անոնք արտօնուած են հողատարութեան հողամասը մտնել, հակառակ որ անցազիր չունին: Այժմ պաշտօնագէտ կը յայտարարուի թէ Ֆրանսական կառավարութիւնը եւ Ազգերու Լիկայի Գաղթականաց Մարմինը խորհուրդ ստացած են թէ հայոց ներթափանցումը մտահոգիչ համեմատութիւններ սկսած է ստանալ եւ իրենցմէ խնդրուած է քայլ առնել այդ առնչութեամբ» (23) :

Լոնտոնի Լորտ Մէյլըրի Փոնտը «Հայկական Նոր Արտագաղթը» անունով կոչ մը կ'ուղղէր 9 Յունուարի, 1930 թ.-ին, ուր, ի միջի այլոց կը գրէր թէ 30,000 նոր դաղթականներու այս ներթափանցումը անմիջական օգնութեան մը կը կարօտէր, եւ նուիրահաւաքութեան հրաւէր կու տար (24) :

Հ. Բ. Ը. Մ. ի Ամերիկայի շրջանակի պաշտօնաթերթ՝ «Յուշարար»ը, 1930 թ.-ի Փետրուարին կը գրէր. «Հայէպէն հասած վերջին տեղեկագիրներու համաձայն, հոն ապաստանած նոր տարազիրներու թիւը կը հասնի 1200-ի, իսկ Հասիչէ, Քամիչլի, Համուտա եւ Գարամանիէի շրջանին մէջ կը դտնուին քրտախօս 390 ընտանիքներ: Ասոնք մեծ մասամբ ճամբան նեղութիւններ կրած եւ կողոպտուած են: Իսկ հարսանիթ եւ ծաղկախտ ճարակած ըլլալով, 130 մանուկներ մեռած են» (25) :

1929-1930 թուականներուն զուգադիպող հայոց այս պարտազիր արտագաղթին հետեւանքով Թուրքիայէն քշուած հայերու թիւը մեզի անյայտ կը մնայ: Այսուհանդերձ, վստահօրէն կրնանք յայտնել թէ հազարաւոր հայեր ենթակայ եղան այդ միջոցառում-

22) Նայնը:

23) «Times», London, December 11, 1929.

24) F. O. 371/14567.

25) «Յուշարար», Նիւ-Եորք, Ժէ. Տարի Բիւ 143, Փետրուար, 1930:

ներուն (26) : Այսպէս կոչուած քաղաքակիրթ աշխարհը իր շահերուն բերումով լուռ ականատես հանդիսացաւ այս նոր տեղահանութեան, բացի մարդկայնական եւ թերեւս այլ շարժառիթներով դործող կարգ մը բարեսիրական օտար կազմակերպութիւններու նախաձեռնութենէն : Բնական է որ Սուրիոյ եւ արտասահմանի հայկական իշխանութիւններն ու կազմակերպութիւնները իրենց տկար միջոցներուն ներած չափով օժանդակեցին իրենց դժբախտ ազգակիցներուն :

Այդ շրջանին Հ. Բ. Ը. Միութիւնը 1000 անդիակական ոսկիի նպաստ մը ըրած էր արդէն եւ ձեռնարկած էր հանդանակութեան մը՝ «նոր տարազրեւոց» համար :

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Սահակ Բ.ի հովանաւորութեամբ կազմուած էր Տարազրեւոց Մանակալութիւն մը, ատենապետութեամբ՝ Տոքթ. Ալթունեանի եւ անդամակցութեամբ Գարբիէլ Մ. Վրդ. Գասպարեանի, Ա. Մաղլումեանի, Գ. Աղիրեանի եւ Տոքթ. Տէր Ղազարեանի (27) :

Իսկ Ամերիկահայ դաղութին մէջ կազմուած էր նման յանձնախումբ մը, բաղկացած Տիկ. Ճ. Թելֆէյեանէ, Տիկ. Ս. Սարգիսեանէ եւ Վահան Քիւրճեանէ : Իսկ Մեթրոպոլիթըն Օփերայի Թեյոր՝ Արման Թոքաթլեան ի նպաստ նոր դաղթականներուն համերդ կու տար (28) :

Այս արտագաղթին մասին լեբըին վաւերաթուղթը կը կրէ 6 Մարտի, 1930 թուականը եւ Կ. Պոլսոյ Անդլիոյ ներկայացուցիչ՝ Սըր Ճորճ Քլարքի կողմէ Լոնտոն՝ Արտաքին Գործոց Նախարարութեան, Պր. Ա. Հենտըրսնի դրկուած է : Սոյն՝ թիւ 80 դաղտնի տեղեկագիրը, որ Լոնտոնի մէջ ստացուած է 10 Մարտի, 1972 թ.ին, կ'ըսէ. «Կը ցաւիմ որ այս հեռաւորութենէն անկարելի է վստահելի տեղեկութիւններ քաղել Թուրքիոյ Արեւելեան Նահանգներէն հայերու արտագաղթին մասին, որ ձեր թիւ 133, անցեալ Փետրուարի 24-ի հեռադրին նիւթը կը կազմէր ինչպէս եւ այլ նոր թղթակցութեանց :

«2 - Այն բոլորէն, որ կարող եմ հասկնալ, արտագաղթը կը

26) «Յուշարար»ի փետրուար 1930 թիւի ամգլերէն բաժնին մէջ դրուած տեղեկութեամբ մը համաձայն միմչեւ այդ օրերուն, հարբերդի եւ Տիարպիքի շրջանէն 3000 հոգի տեղահամ եղած են, որոնցմէ 130 մամուկներ մահացած են : Այս թիւը ամշուշտ հետագային աւելցած է :

27) «Յուշարար» ժի. Տարի, թիւ 143, փետրուար, 1930 :

28) «Hooshar» (English section), New York, XVII year, No. 143, Feb. 1930.

Թուի ըլլալ արդիւնքը ընդհանուր պարագաներու, քան թէ Թրքական կառավարութեան կողմէ մասնաւոր ճնշումի մը: Բարեբախտաբար կապակից ենթականերու թիւը քիչ է: Կը կարծուի թէ կան, կամ մինչեւ վերջերս կային, ընդհանուր թիւով 10,000, կամ 12,000 հայեր, Թուրքիոյ Արեւելեան Նահանգներուն մէջ – 2000 (կէսը Կաթողիկէ, կէսը Գրիգորեան) Կեսարիոյ մէջ, 1000 կամ 2000 Սվազի մէջ, 500 Ամասիոյ մէջ եւայլն: Կը թուի թէ այս մարդիքը անդրադարձած են որ Թուրքիոյ մէջ կեանքը անկարելի էր այլեւս իրենց համար: Անոնք արտօնուած չեն երկրին մէջ շրջելու եւ առեւտուր ընելու, ինչպէս առաջ կ'ընէին: Անոնք սահմանափակուած են քաղաքներուն մէջ: Իրենց դպրոցները չեն կրնար ունենալ իրենց դասակները կրթելու համար: Յաճախ եկեղեցի չունին, եւ աւելի յաճախ, քահանայ չունին: Անցեալին իրենց կորսնցուցած կալուածներուն չեն կրնար վերատիրանալ: Թուրքիոյ մնացեալ բնակչութեան նման ներկայ վատ ժամանակները կը դզան:

«3 – Ընդհանուր պարագաները, ուրեմն, այնքան աննպաստ էին, որ կրնան պատճառ նկատուիլ իրենց մէջ ներկայ շարժումին: Այժմ արտագաղթը տասներկու ամիսներէ ի վեր կը շարունակուի: Անցեալ դարնան, քանի մը քսանեակ հայեր Կ. Պոլիս եկան Սվազի շրջակայքէն: Եթէ դէպի Սուրիա արտագաղթը շատ աչքառու եղաւ վերջին ամիսներուն, հաւանական է որ – հակառակ անոր որ որեւէ փաստ չունիմ այդ ուղղութեամբ – հայ-քրտական էմքրիկներու վախը Տիարպեղիի, Սարբուրդի եւ այլ վայրերու իշխանութիւնները մղած է տեղւոյն հայերուն հասկցնել որ աւելի խոհեմ պիտի ըլլար իրենց մեկնիլը» (29):

Մենք չենք բաժներ Սըր ձորճ Քլարքի այն տեսակէտը թէ արտագաղթը «Թրքական ճնշումի» հետեւանք չէր, մանաւանդ որ ինք եւս իր դրութեան վերջաւորութեան նման միտք մը կը յայտնէ: Այս տեղեկագիրը եւ Հալէպէն Մանք-Մէյսընի տեղեկագիրը նաև այս կէտին շուրջ իրար կը հակասեն: Չենք բաժներ նաև այն կարծիքը թէ միայն 10,000–12,000 հայեր կ'ազդէին Թուրքիոյ ներքին դաւառները: Շատ աւելի կը նկատենք անոնց թիւը: Այդ շրջաններուն մէջ այսօր այս թիւէն շատ աւելի մեծ թիւով հայեր կ'ազդին: Անհաւանական չենք դոներ որ Թուրքեր հայ-քրտական կապերէն մտահոգուած ըլլան, քանի որ նոյնիսկ Համաշխարհային Բ. պատերազմի ընթացքին նոյն վախերը ունենալին պաշտօնապէս կը հաստատուին վաւերաթուղթերու կողմէ (30): Այսուհանդերձ

29) Բ. Օ. 371/14587.

30) Բ. Օ. 371/30069.

պէտք չէ մտահան ընել որ թրքական հանրապետութիւնը, իբր հարազատ ժառանգորդը երիտասարդ-թուրքերու մտայնութեան, «Թուրքիան թուրքերուն» կարգախօսի ծրագրի իրականացման ճամբուն վրայ՝ հայերու այս արտագաղթն ալ, ըստ կանխամտածուած ծրագրի, յաջողեցաւ իրականացնել:

## THE FORCED ARMENIAN EMIGRATION FROM THE INTERIOR TURKISH PROVINCES

(1929-1930)

ZAVEN MESSERLIAN

After the heavy defeat of the Ottoman Empire in World War I, the Republic created by Mustafa Kemal, by virtue of diplomacy and complicity with Great Powers, succeeds to subjugate Western Armenia and Kurdistan. Mustafa Kemal, once established in rule, persists in his policy of persecuting Armenians, and, under the pretext of an alleged Armeno-Kurdish cooperation, fulfills, in fact, the genocide perpetrated by the Young Turks. During the years 1929-1930, Republican Turkey exiles from 30 to 40 thousand Armenians from Diarbekir, Kharpert, Balou, Merdin, and various parts of Western Armenia to Syria. Armenians are forced to relinquish their ancestral lands, and their passports are stamped «Forbidden to reenter Turkey». Great Powers, in view of such compulsory emigration, never intervene, for fear their diplomatic relations with Turkey may be impaired. Reference in the foreign press to the overt criminality is minimal.